10219361

ՕՐԱԳԻՐ

ԺԵ ՏԱՐԻ, ԹԻՒ 12. 1857 ՅՈՒՆԻՍ 15.

բարոյական

ԻՐԵՔ ԹՈՒՈՑՆ ԲԱՐՈՅԱԿԱՆԸ [1]

Ճշմարիտ ուրախութեան իրեք աղբիւրներ. մաքուր խղճմտանք, աղէկ խորհուրդներ, և բարի գործքեր։

Յամանակին վրայ իրեք ճշմարտութիւն. ագահ ժամանակը ամէն բան կը խորտակէ, աշխարհքիս վրայ եղած ամենէն մեծ համբաւն ալ կ'ոչնչացընէ, ամէն մահացու բան՝ ժամանակաւ կ'անցնի։

Իրեք բան որ և իցէ գործք աղէկ վախճանի կը հասցընեն. հանճար, խոհեմութիւն և անխոնջ աշխատութիւն։

Յանցաւորի մը համար զուրցուած իրեք ճշմարտութիւններ. յանցանքը հիւանդութիւն է. յանցաւորն ալ թունաւոր բոյս մը. պատիժ կը դրուի որ ախտերը ջնջէ և ուղղէ։

Ուսումնական մարդիկ իրեք վախճան ունին. դաստիարակել, կրթել, և աղնուացընել։

Իրեք պատճառի համար պէտք է հեռու կենալ գէշ մարդկանցմէ. վասն զի գէշ կը մտածեն, գէշ կը խօսին և ամենագէշ կը գործեն։

Իրեք մտածմունք միշտ մտաց մէջ ունենալու է. յանկարծակի փառքը շուտով կը խաւարի, երիտասարդութիւնը շուտով՝ի ծերութիւն կ'երթայ, և թէ ամենքնիս բաւական մը հոգ պիտի դառնանք։

Իրեք մեծարգոյ հրամայողք որ կը պատուիրեն մեր ընկերը սիրել և օգնել անոր. կրօնք, բան և բնութիւն։

Հոմերոս՝ յաստուածոց տրուած պարգևներու վրայ իրեք ճշմարտութիւն կը զրուցէ. աստուածներն շատերուն տուին զօրութիւն, շնորհք քիչ մարդու, իսկ առաքինութիւն ամենաքիչ անձանց։

[1] Տես երես 85, 117, 149։

Կրեատցիք իրեք ախտ սաստիկ կը պատժէին. ագահութիւն, ապերախտութիւն և կեղծաւորութիւն։

Մարդկութեան իրեք ահաւոր հարուածներն. երկրաշարժ, ժանտախտ և սով։

Հպարտութեան հետևանք իրեք մեծ մեղքերը. անհնազանդութիւն ծնողաց, արհամարհութիւն մեծաւորաց, և ապերախտութիւն բարերարաց։

Ինքնութիւնը իրեք ահագին խօսք կը զրուցէ մարդուս. ով մարդ մոռանէ թէ ուստի կու գա՝ և ամբոցիր, ո՞ւր կը գըտնուիս՝ և արտասուէ, ո՞ւր կ'երթաս՝ և սարսափէ։

Ա կայ մը իրեք կատարելութիւն պիտի ունենայ. բարութիւն, եղածին վերայ պայծառ ծանօթութիւն և հաւատարմութիւն վկայութեան մէջ։

Իրեք զօրաւոր բան. ոսկի, սէր և յանդգնութիւն։

Հաւատարիմ բարեկամի իրեք կատարելութիւն. Ճշմարտութիւն, բարութիւն և հաւատարմութիւն։

Իրեք անհաստատ բան. պարզութի ձմեռուան մէջ, հանդարտութիւն ծովու, և կնոջ սէրը։

Իրեք տեսակ մարդու՝ բնութիւնը պէտք չէր լեզու տալ. յիմարին, անխոհեմին և յանդգին։

Իրեք փոքր մարդուս Ճշմարիտ մեծութեան. չափաւորութիւն, պարկեշտութիւն, և մարդասիրութիւն։

Նրիտասարդայ համար իրեք բան կը փափագէր Սոկրատ. երեսի պարզութիւն, ամօթխածութիւն, սրտի և լեզուի լուութիւն։

Իրեք բան կը կուրացընեն զմարդ. բարկութիւն, նենգութիւն և սէր։

Իրեք տեսակ մարդ կայ որ հանգիստքուն չեն կրնար ունենալ. ագահն, աւազակն և մատնիչն։

Ընիստասարդայ իրեք բան կը փափագի երիտասարդայ. հանՃար, կրթութիւն, և վարժութիւն։

Ոյժքաղդութեանց դէմ իրեք բան պէտք է. կամ ուժ, կամ քաջութիւն, և կամ համբերութիւն։

Արդու օգտակար իրեք ուսմունք. կրօնք, բնութիւն և պատմութիւն։

Ընդքատին իրեք հարկաւոր բան. պարկեշտութիւն, խոնարհութիւն և համբերութիւն։

Իրեք հարկաւոր բան պէտք է դատաստան մը վաստըկելու համար. իրաւունք, կերպ և խոնարհութիւն։

Նախնական իրեք գիտնալու բան, թէ մի միայն է Աստուած, թէ մէկ հոգի մը ունինք, և թէ պէտք է որ մեռնինք։

Խաղողն իրեք զօրութիւն ունի. կը զուարճացընէ, կը զօրացընէ և կը գինովցընէ։

Իրեք միութիւն յողբերգութեան. միութիւն գործոյ, ժամանակի և տեղւոյ։

Ընդկութիւն Ճանչնալու համար իրեք կերպ. կրակով կը Ճանչցուի ոսկւոյն աղէկութիւնն. ոսկւով կանանցն, կանանց ձեռքով ալ արանց առաքինութիւնը։

Հարստութեան վերայ իրեք Ճշմարտութիւն. առանց քրտնելու չվաստըկուիր, առանց վախնալու չնայուիր և առանց ցաւոց չկորսուիր։

Ատանայի դրած իրեք ընկերութիւն. ագահութիւնը վշտաց հետ, անպարկեշտութիւնը ցաւոց հետ, ստութիւնը՝ ամօթխածութեան հետ։

Իրեք պարտք ունի մէկ պարկեշտ օրիորդ մը. խնամով պահել իր անձին պատիւը, զգուիլ անկարգ կերպով հագուելէն, հեռու կենալ աներեսներու խօսակցութէ և անպարկեշտ կանանցմէ։

Իրեք պատՃառի համար հարկ է փախչիլ'ի ստութենէ. վասն զի անարգ ախտ մըն է, ամենագէշ արատ մը, և պատուաւոր մարդու անարժան գործք մը։

Արդուս իրեք վնասակար կիրք. հպարտութիւն, անսանձ սէր, և վատշահասիրութիւն։

Ընդերախտութեան տրուած իրեք գէշ անուններն. մայր ամէն ախտերու, թշնամի բնութեան, և սպանող բարութեան։